

ՊԱՅՄԱՆՆԵՐ

ՊՈՒԼԿԱՐԻԱ

Տարեկան 8 Ձր.
Վեցամսեայ 4 Ձր.

ԱՐՏԵՍԱՀԱՐԱՆ

Տարեկան 10 Ձր.
Վեցամսեայ 5 Ձր.


ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան 2 Տօլ.
Վեցամսեայ 1 Տօլ.

ԿԱՆԻՍԻԿ

ԵՐԱՆՈՒՑՄԱՆ ՏՈՂԸ

20 ՄԵՆ.



ԼՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱՅԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱՆՈՒԻ ԱՄԷՆ ՇԱԲԱԹ ՕՐԵՐ

ՀԱՍՑԷ

Rédaction du Journal

„Ira vounk“

Varna

Редакция на

Вѣстникъ

„Иравункъ“

Варна

Գրադրիւնք եւ տպարան

rev. Père G. Kalemkérian Michitaris
tengasce № 4
Vienne

ԱԶԳԱՅԻՆ ՏՈՒՐՔԻ ԽՆԴԻՐԸ

Ազգ. Երեսփ. Ժող. վոյ. ձախա-
կողիւն հատուածը Կ. Պոլսոյ
նորոգ երեսփոխանական բնարու-
թեանց առթիւ կ'առաջարկէ զանց
ընել ազգային տուրքի վճարման
պարտաւորիչ պայմանը՝ սա առաք-
կութեամբ թէ տուրք վճարող
ներու թիւը սահմանափակ չլու-
նով, ընտրութիւնք տեղի կ'ունեն-
ան նեղ շրջանակի մը մէջ:

Ցուալի է որ ազգային Սահ-
մանադրութեան հիմնական ըս-
կզրուները անվճար պահպա-
նելու պաշտօն ու պարտականու-
թիւն ունեցող երեսփոխաններ-
ուն մէջ կը դառնան այնպիսիք
որոնք քաջութիւնը կ'ունենան, ա-
զատականութեան պիտակին տակ,
սահմանադրական ակներեւ զեղ-
ծումի առաջարկ մը բերել՝ որ
պիտի է ազգային տուրքի շնոր-
հը կամ զանցառութիւնը: Սահ-
մանադրութեան վերաքննութեան
պարագային իսկ՝ այդօրինակ ա-
ռաջարկ մը չէր կրնար սեղանին
վրայ դրուիլ՝ քանի որ հիմնական
սկզբունքի մը կը վերաբերի, այ-
լապէս առած՝ «սկզբունքային»
և խոշոր «Սոսիալ սկզբունքային»
հարցի մըն է...

Փափաքելի էր անշուշտ որ
ընտրութեանց մասնակցէին կա-
րելի եղածին չափ շատ թուով
անձինք: Բայց ո՞վ է մեղաւորը
թէ մեր հասարակութեան մէջ ա-
նոր հակառակը կը պատահի: Մեր
ձեռքը օրէնք մը ունինք, Սահ-
մանադրութիւնը որ ի՞նչպէս ու
է երկրի կամ ժողովուրդի սահ-
մանադրութիւն հաստատած է
պարտքի և իրաւունքի հիմնական
սկզբունքին վրայ: Չլայ սահմա-
նադրութիւն մը որ ունի իրա-
ւունք առանց պարտականութեան
և փոխադարձաբար պարտակա-
նութիւն առանց իրաւունքի: Այն
որ կը յաւակնի ըսել թէ «ես ի-
րաւունքս կը պահանջեմ, բայց
պարտականութիւն չեմ ճանչ-
նար», այդպիսին նովին խօ. քովն
ու գործողը կը դադրի սահմա-
նադրական մարդ ըլլալէ և կը
դառնայ բռնաւոր մը: Իսկ անոնք

որ տգէտ ամբոխին շարունակ կը
քարոզեն թէ անիկա «իրաւունք»
ներս ունի, առանց միեւնոյն ժա-
մանակ անոր յիշեցնելու թէ փո-
խադարձ պարտականութիւններ
ալ ունի այդպիսիք ժողովուրդը
պարզապէս կ'առաջնորդեն անիշ-
խանութեան, և անարխիայի...

Կը փափաքեք որ ժողովուրդը
աւելի լայն շրջանակի մը մէջ
մասնակցի ընտրութեանց, լաւ
ուրեմն, փոխանակ ձեռք երեսփո-
խանի պարտականութեան դէմ
մեղադրելու, փոխանակ սահմա-
նադրական զեղծում մը գործելու:
Փոխանակ անհեթեթութիւն մը
ի՞նչպէս ասել... «միանձնակ»
մէջտեղ նետելու քարոզեցէք ժո-
ղովուրդին որ աւելի որոշ գիտակ-
ցութիւն մը ունենայ իր պար-
տականութեանց և իրաւունքի քա-
րոզեցէք որ իր ազգային տուրքը
վճարէ որպէս զի իրաւանց տէր
դառնայ Օսմ. Սահմանադրութեան
վերահաստատումէն մինչև ցայսօր
հազար միթինկ գումարեցիք և
չո՞ս հազար ճառ խոսեցաք: Մի-
թէ չա՞րժեք որ, փոխանակ Սահ-
մանադրութեան դէմ ակներեւ
զեղծում մը գործելու, քանի մը
միթինկ և երկոտասնեակ մը ճա-
ռի զոհողութիւնն ընէք բացառ-
րելու համար մեր ժողովուրդին
թէ պարտաւոր է հանրային գոր-
ծելու մասնակցիլ և մասնակցու-
թեան իրաւունք ձեռք բերելու
համար ալ պէտք է որ առ Ազգ. ը-
նեցած պարտականութիւնները
ըստ Սահմանադրութեան կատա-
րէ...

Մեր ժողովուրդը պարտական
ժողովուրդ մըն է: Մեր ժողովուրդ-
ը վճարող ժողովուրդ մըն ալ է,
միայն պէտք է ձանձութիւնն
յանձն առնել իրմէ ուղիւ:

Ըսէ՛ք խճրեմ, աշխարհի ո՞ւ
է ժողովուրդի քանի՞ հազարորդ
մասը ինքնաբերաբար կուգայ իր
պարտականութիւնը կատարելու:
Եթէ իրմէ յատկապէս ուղող մը,
պահանջող մը չգանուի:

Մենք այսչափ տարիներէ ի վեր
առաջին անգամն ըլլալով Ազգա-
յին տուրքի գրութիւնը Ազգ. ք-
անդակոյ մէջ գործադրեցինք:

այսինքն առաջին անգամն ըլլա-
լով Սահմանադրութեան մէկ
հիմնական սկզբունքը կիրարկած
եղանք: Յանցանքը որունն էր ե-
թէ այսչափ ուշացանք, ո՞չ ա-
պաքէն մերը, Բայց հարցուցէք
թէ ի՞նչ միջոցներով Ազգ. քան-
դակոյ սահմանափակ հայութեան
մէջ առջի անգամէն 260 ընտ-
րող այսինքն ազգային տուրք
վճարող ունեցանք: Կը կարծէ՞ք
արդեօք թէ ամէն ոք եկաւ ինք
նաբերաբար իր այս սահմանա-
դրական պարտականութիւնը կա-
տարելու: Ամենեւին ո՛չ: — Այդպիսի
ինքնաբեր շարժում մը Անգլիոյ
և Ամերիկայի մէջ անգամ հրաշ-
քի կա, դ պիտի անցնէր: Մենք
բա՛րեկսմենք, աշխատեցանք
մեզմէ իւրաքանչիւր իր ծանօթ-
ներու շրջանակին մէջ Ազգային
տուրք վճարելու պէտքը քարո-
զեց, փաստաբանեց և համոզեց և
այս կերպով հասցանք առա-
ջին անգամուան համար գոհացու-
ցիչ արդիւնքի մը, արդիւնք որ
անշուշտ յաջորդ տարիներուն, ա-
ւելի լայն շրջանակէ մը բխելով,
ալ աւելի գոհունակութեան առիթ
պիտի ընծայէ:

Ազգային տուրքի գրութիւնը
սահմանադրական անյեղի սկզբ-
ունք մը գոհացնելէ անկախա-
բար ունի այլապէս բարոյական
նշանակութիւն մը որ գուցէ չա-
տերու ուղարկութենէն կը վրի-
պի, այն ալ սա՛ է թէ Անոնք որ
կը վճարեն՝ չեն քակողք զի կը
զգան թէ ազգային ամեն հաստա-
տութեան մէջ իրմէ մը յարմար
իրենք՝ իրենց ձախտիկ քրտի՛քս
վր... Սահմանադրական Վաշտ.
թեան մը հաստատութիւններ
կը նմանին՝ տնտեսական աշխա-
հի մէջ համաշխարհային (co-
operative) ընկերակցութեանը նա-
խաձեռնութեամբ կազմուած հաս-
տատութիւններուն, որոնց իւրա-
քանչիւր անգամը բաժին մը ու-
նի անոնց մէջ և անոնց բոլորա-
ւածման և զօրացման կ'աշխատի
շարունակ, զի իր տնտեսական շա-
հէ այդպէս կը պահանջէ իսկ այն
որ գործի մը համար նիւթական
կամ բարոյական ունէ զոհողու-

թիւն չէ ըրած՝ չի կշռեր, չզգար
անոր կարեւորութիւնը և կրնայ
դիւրաւ ենթակայ ըլլալ կից մըն
ալ իր կողմէն տալու անոր տա-
պալման:

Երեւակայեցէք որ ուրիշին հաշ-
ւոյն ապրող մարդիկ ո՛ւնէ ջա՛ք
չեն ընէր անոր հայտարարութիւնը
խնայելու, ինչպէս ուրիշ ցեղեր
նաւաճելով և անոնց հարստութե-
ամբ ապրելու ունակութիւնն ու-
նեցող ազգեր բնաւ խղճահարու-
թիւն չեն ունեցած նոյն ի կ ի-
րենց ապրուստի աղբիւրը ցամ-
քեցնելու:

— Շինո՞ղր միայն շինուած քին
յարգը գիտէ:

Այնպէսեցէք շինուած, այսինքն
հանրութեան համար վճարելու
վարժեցնել ժողովուրդը, և ո՛չ
միայն սոսկ առնելու, գրաւելու:

Առանց տալու առնելը կործա-
նելու, հոմանիշ է:

Ինչո՞ւ այսչափը սորվեցնելու էր
մեզի մեր Արեւելոյցի իմաստու-
թիւնը ու մանաւանդ, առաջ հա-
յու փո, ձառութիւնը...

(Դաշինք) ԼԵՒՈՆ ՄԿՐՏԻՉԵԱՆ

ՄԱԿԵՐՈՆԻԱ ԵՒ ՊՈՒԼԿԱՐԻԱ

ՕՍՄ. ԵՐԵՍՓ. ԺՈՂՈՎԻՆ ՄԷՋ

Օսմ. Պուլկար երեսփոխան Տ. Բանչէ
Տորեվ թագրերով մը հարցապըն-
դում մ'ուղղած էր Օսմ. կառավարու-
թեան: Շարաթ որ նոյն պուլկարիւն-
փոխանը բերանացի ևս բացատրեց իր
թագրերը, և ըսաւ թէ Մակեդոնիա
ունի 2,300,000 բնակիչ, որոնցմէ
720,000ը պուլկար, այսինքն 300/0ը,
530,000ը յոյն, 230/0, և 100,000ը իս-
լամ, այսինքն 470/0: Էտրնէ կուսա-
կալութիւնն ունի 1,150,000 բնակիչ,
որոնցմէ 127,000ը պուլկար, 280 հա-
զարը յոյն և 740,000ը թուրք: Ընդա-
մէնը երեքուկէս միլիոն բնակիչի վրայ
Պուլկարներուն համեմատութիւնն է
250/0, Յոյներուն 230/0, և իսլամնե-
րունը 530/0: Ասիկա վապագուցանէ
թէ Մակեդոնիա ո՛չ Պուլկարիւնն է,
ո՛չ Յոյները, ալ բոլոր Օսմանիւնե-
րունն է, ի գլուխ ըլլալով թուրքերը
(Ծափեր): Այս ճշմարտութիւնը կ'ըսէ
որպէսզի անհետանան դրացի Պետու-
թեանց տաճած իրձերը՝ իւրացնելու

«Դպրոցական ցուռ է ինձ տեղեկացնել ճանապարհին պատահած այն անսովոր դեպքը զոր մինչև իսկ առ ժողովը կզգամ զայն Ձեզ պատմելու»։ Հայտնի է մեկ նեցյալ կէս օրէն վերջ ժամը 2ը 27 վայրկեան անցած՝ երկրորդ կարգի վախօտով մը, ուր ինձմէ զատ կը գտնուէին նաև պարոն մը և երկու կիներու ինքնատու մի ի կռաբարանը ուր կառասնուամբ կանգ կառնէ։ Կիները իջտն, իսկ ես այդ ճամբորդին նետ վառ կօնքն մէջ մնացի առանձին։ Մարդը տեղէն ելաւ ու

ԱԶԳԱՅԻՆ

Պոլսոյ Բանկայի ընդարձակ գերեզմանատան միայն հոյ աղ-գային եկեղեցւոյ սեփականութիւն լինելը հաստատու և հայ պապականաց պատրիարքարանին առարկութիւնները հերքող վաե-րաթուղթեր գտնուած են մեր Պատրիարքարանի արշիւններուն մէջ:

— Պատր. Տեղապահ Ս. Դ. Նորտե-սակցութիւն մը պիտի ունենայ Պուլկարաց Ս. Եկեղեցին հետ, Պուլկարիոյ Հայոց առաջնորդա-կան և Գարոնցական խորհրդ մա-սին:

— Չարսաճագէն Ն. Կ. հանրա-գրութիւններ հասած են պատրի-արքարան: Այդ դժբաղդ գաւառի հայ ժողովուրդը թէ՛ իր կեանքի անպահովութեան և թէ՛ իր հո-ղերուն պէտքերէ ու աղաներէ գը-րաւած ըլլալու մասին կը բողոքէ և միջոցներ ձեռք առնել կը խնդրէ: Պատրիարքարանէն ցարդ-եղած դիմումներուն կառավարու-թեանէն չի ճապարակուած պաշտօնա-պատասխանը տրուած: սակայն գործնականին մէջ ո՛րք է բարե-քուստ չէ կատարուած այնպէս որ այսօր նիւթական շատ ողբալի վիճակի մը մէջ կ'ապրի Չարսա-ճագի ժրաշան հայութիւնը: Տեղ-ւոյն քահանան ինք անձամբ Պա-լիս եկած է գործին մշուծ տա-լու համար:

— Երզնկայի 8 քահանաները վշտանալով Առաջնորդէն պոյրթ-ըբել են և քանի մը օր ժամեր-գութիւն չեն կատարեր:

— Արեւիկայի Աւետի Հոգօքնի հայ կանանց կրթասիրաց ընկե-րութիւնը գովելի կարգադրու-թիւն մըն է ըրած՝ պատրաստե-լով դաստիարակութեան ցարդ մը կ'անանց համար՝ նպատակ ունե-նալով ժառանգել տեղւոյն հայու-

հենքերուն գարգացման:

Օրինակելի ձեռնարկ մըն է այս պայմանաւ որ նիւթերու և ատենախօսներու ընտրութիւնը խնամքով կատարուի որպէս զի յօք շինելու ատեն աչք չը հան-ուի:

— Գոնթանցոյէ կ'իմանաք թէ տեղւոյն Մանկապարտէզը տակաւին չէ բացուեր: Ի՞նչու այս յապաղումը չե՞ք հասկնար: Մօ-տէն գիտե՞ք, թէ ասկէ վեց ա-միս առաջ նախնական կարգադ-րութիւնները եղած լմնցած էին: Բացի կառավարութենէն արտօ-նութիւն ձեռք բերելու աշխա-տութեան հետ: ասոր համար ալ թաղ-խորհուրդը արոշած էր յարմա-րագոյն ունի մը յանձնել հե-տագոյն: Այսի վերջերը մեզ տեղեկութիւն հաղորդուեցաւ, թէ պէտք եղած դիմումը եղած է կրթական նախարարութեան, նաեւ խնամակալութիւն մ'ընտրուած է յարմար անձերէ: Արդ, մեզ շատ տորօրինակ կը թուի Մանկա-պարտէզին մինչև այ օր բացուած չըլլալը, և չենք ալ կարծեր որ կ'առավարութիւնը զլացած ըլլայ խնդրուած արտօնութիւնը:

Այդ գործին այնչափ եռանդով փարոզ և նիւթալանը ապահովող ժողովուրդը բնականապէս իրա-ւունք ունի բացատրութիւն ու-ղեւ թաղ. խորհուրդէն, որ պաշ-տօնապէս խոստացած էր ամեն կարելին ընել Մանկապարտէզը ընդհուպ բանալու համար: Թոյժ հետաքրքրութեամբ մենք ալ կ'ապաստենք յայդ բացատրութեան: — Թուոցիկ «Հրաւէր» մը կ'ի-մացնէ Վսեմայի հայ հասարա-կութեան թէ տեղւոյն թաղ. խո-հրդոյ դէմ բացուած դատը ամ-սոյս 30 ին պիտի նախու նահա-գային պա-ճական ատենին առ-ջիկ դատավարութիւնը հրապա-րակային պիտի բլլայ: Եւ ասի հե-տաքրքիրներ կը հրաւիրուին ունենդրութեան:

ԿՈՎԿԱՍՏԱՆԻ ԼՈՒՐԵՐ

Ռուս հեռագր. գործակալու-թիւնը Բեղերսպուրկէն հեռագ-րած է մարտ 14ին այսպէս:

«Բաճրագոյն հրամանով «հայ Յեղափոխական Դաշնակցութիւն» խմբակցութեան, որ կատարել է իշխուութեան մի շարք ներ-կայացուցիչների սպանութիւն, քննութիւն աւարտված գործը յանձնված է սենատի առանձին ատենանի քննութեանը՝ մասնակ-ցութեամբ դատային ներկայա-ցուցիչների»:

— Նոյնպէս Բեղերսպուրկէն մասնաւոր հեռագրէ մը կ'իմանալ Մշակ թէ մեծահարուստ Ալէք-սանտր Մանթաշեան ծանր կեր-պով հիւսնդացեր է այդ քաղաքի մէջ: Հրաւիրուած քրօթէօքօր բժիշկ ներք յայտներ են որ հիւանդին վիճակը վտանգաւոր է:

— Կովկասի մէջ ալ համալսա-րան մը հաստատելու որոշում տուած է ռուս կառավարութիւնը: Այս առթիւ կովկասաբնակ մեր ազգայնոց ուրախութիւնը մեծ է, վասն զի ալ ասկէ վերջ բարձ-րագոյն կրթութիւն ստանալու համար՝ կովկասի երիտասարդները հեռաւոր կեդրոններ երթալու և աւելորդ ծախքեր ընելու դժուա-րութիւններէն զերծ պիտի ըլ-լան:

Պ Ա Ր Ս Ս Կ Ա Ն Ա Յ Ք

Ատրպատականի Առաջնորդը Պարսից Շահի նոր խնամակալին պաշտօնը հե-ռագրաւ շնորհաւորած ըլլալով, նեաե-նալ պատասխանը ստացած է:

«Ատրպատականի հայոց Գեր. Առաջ-նորդին: Ձեր գերապատուեան բարի ցան-կութեանց համար, որ յայտնել էիք մեր մասին, ուրախ և շնորհակալ եմ: Ազգի և պետութեան ցանկութեանց ի-րականացումը, կախումն ունի ազգերի գլխաւորների իրար հետ ունեցած փո-խադարձ աջակցութիւնից և սերտ մի-

ութիւնից և ազգի աշարջութիւնից ու միաբանութիւնից: Հայցում եմ Աստու-ծոյ, թողոր բարի և խելացի անձանց և ամբողջ ազգի բոլոր անհատ և բնիկա-տարեալ միութեան, փոխադարձ օգ-նութեան և ճշմարիտ եղբայրութեան շաւղի մէջ դնել: Հայերի մինչև այժմ ցոյց տուած գոծակցութիւնը արդա-րութեան և լուսաւորութեան գործում կատարեալ ուրախութիւն է պատճա-ռում մեզ, վստահ ենք, որ Ձեր գե-րապատութեան խրատներով այն գո-հացօցիչ զիբքի մէջ միշտ նստաւորու-ն կը մնան:

ՆՈՒ ՀՐԱՍՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Թ Ի Ա Պ Ա Ր Տ Ը

Հայ յեղափոխական կեանքէ յոյժ նե-տաքրքրաշարժ այս վէպին երկրորդ սուպերութիւնը ամբողջովին ԼՈՅՍ ՏԵ-ՍՍԻ Իրաւունքի տպարանէն: Որոնք որ Ա. մասը ստացած էին, այժմ՝ կրնան անմիջապէս ստանալ Բ. և Գ. մասերն ալ խմբագրութենէն՝ կանխիկ զրկելով փոխարժէքը: Ամբողջ երեք մասերուն գինն է 4 ֆր. Տասը օրինակ դուրս-ներուն 100ին 20 դեղ:

«Ի Ն Ն Ս Ո Ւ Ն Ե Ր Ե Ք»

Պատճառի «Ազգ» շաբաթաթերթի տը-պարանէն լոյս տեսաւ Վիքթոր Հիւ-կոյի ԻՆՆՍՈՒՆ ԵՐԵՔ վէպը յաջող թարգմանութեամբ և մաքուր տպա-դրութեամբ:

Ստանալու համար դիմել Իրաւունքի իմպրատիւնէն: Գինն է 5 ֆր. կան-խիկ:

«Ա Չ Գ»

Շաբաթաթերթ

Ազգային, Գրական և Քաղաքական, Տարեկան Բաժնեգին 13 ֆր. Դիմել՝
Rédaction du journal «Azk»
16 Beach St. 4th Floor
BOSTON MASS

«Մ Շ Ա Կ»

Քաղաքական և Գրական Շաբաթաթերթ-37 տարուան) բաժանորդագինն տէ տարին 30 ֆր.: 120 դրչ. — Դիմել՝
Rédaction du journal «MSCHAK»
TIFLIS (Cacase)

եկաւ իմ կարգին շատ մօտս նստեցաւ: Ես վախցայ և խնդրեցի որ մէկ կողմ քաշուի, բայց մարդը ոչ միայն չ'ուզեց նեղանալ, այլև ջանաց զիս նստեցուց: Ես խնդրեցի վիճակի մը հասալ և երկուքս մէջ սկսաւ կռիւ: Իսկոյն յափշտակեցի անոր ձեռքն և ուղղանցը ու սկսայ զարնել: Կողմնոցը կոտորեցաւ և ես կարծեմով թէ պիտի յաղթուիմ սկսայ վախնալ: Երկուքս կառաւարտ մը իրար դիմաց կը դանտաղեցնէր: Մարդը չ'իջեցաւ, թողուց զիս և կառաւարտ մը դեռ սարահարթին չ'նստած վար ցատկեց վակօնէն ու փախաւ: Ես բոլորովին լուրջուած էի, բայց չ'ուղա-նցը պահեցի:

Ես գրեմով իմ թղթակցութեան պատահած այդ մի-ջադէպի առթիւ շատ զգացուած ըլլալս, աւել-ցուցի:

«Հանդարտեցէ՛ք և չորեքշաբթի օրը հովանոցը միասին բերէք: Նա ինծի պատասխանեց:

«Ձափաղանց կը ցաւիմ որ դուք ամեն բանէ տեղ-եակ էք: Ես որոշած էի ոչ ոքի յայտնել այդ դէպ-քը: Հովանոցը իմն էք և ոչ թէ այն պարոնին»:

Չորեքշաբթի օրը նախաճաշի միջոցին իմ բարե-կամուհիս հաստատեց միջադէպի բոլոր մանրամաս-նութիւնները և ինձ ցոյց տուաւ հովանոցը, որը ար-դարեւ իմն էր և ոչ թէ այն պարոնին: Ի՞նչ կերպով նամակին մէջ սպրդած էր այդ սխալը, չ'գիտեմ: Գուցէ անոր համար որ չ'եմ պնդած պատմութեանը

մնացեալ մասին ստուգութեանը վրայ: Այն ինչ որ ես կրնամ ըսել այդ մասին, ասիկայ է թէ երբեք մտքս չ'եմ անցուցած անոր ճամբորդութիւնը և ոչ իսկ պատահած այդ անախտօք միջադէպը:

Ես կարող եմ հաստատել թէ տասնհինգ տարուայ ժամանակամիջոցին մէջ ստացեր եմ և այժմ ալ կատանամ իմ բարեկամներէս այս օրինակ նամակ-ներ: Երբեմն սխալներ ալ կը պատահին, բայց առ հասարակ այդ նամակները իրենց ապացուցին ճշդու-թեամբ ի յայտ կ'գան: Այս ինքնաշարժ նեռագագ-ման (Télépathie) դրութիւնը՝ որուն աղբիւրը կը հանրիսանան տակաւին ապրող մարդիկ, ինձ համար այնպիսի անվերջ իրողութիւն մ'է, ինչպէս եւեք-տրական հեռագրի գոյութիւնը: Ասիկայ իրողութիւն մ'է որուն ճշմարտութիւնը ամեն ժամանակ կարելի է ստուգել և այդ իսկ պատճառաւ անոր վաւերա-րականութիւնը որքան իմ բարեկամներուս, նոյնքան և ինձ համար անժխտելի է:

Այսքմ կը մնայ ըսել թէ ողջերու միջև կատար-ուած այսպիսի ինքնաշարժ հեռագագման դրու-թիւնը, որ կը համապատասխանէ անթիւ հեռագրին, կրնայ նաեւ գործադրուիլ անոնց վրայ ալ որոնք մահուան գետը անցեր են: Այս ընդլայնումը պիտի նմանէր Ատլանտեան ովկիանոսէն Մարքոնի մէթո-տով տրուած հեռագրիներուն:

Օրինակ պիտի բերեմ այս գործին հետ վերաբե-րութիւն ունեցող իմ անձնական փորձերէս մին:

Երկու կիներ կը ճանչնայի որոնք ջերմապէս զի-րար կը սիրէին: Ինչպէս յաճախ կը պատահէ, անոնք փոխադարձ խոստում ըրած էին թէ՛ իրենցմէ որը որ աւելի կանուխ մեռնի պիտի երեւայ միւսին: Որպէս-զի տեսականապէս անոր ապացուցանէ անդրգրեղ-ման կանգնի գոյութեան իրականութիւնը: Այդ կի-ներէն մէկը որ կը կոչուէր Ժիւլիա, մեռած էր Պոս-թօնի մէջ վերոյիշեալ պայմանը կնքուելէ վերջը: Մահունէ մի քանի շաբաթ յետոյ, գիշեր մը Ժիւլի-ա կարթնցնէ Երեւանի մէջ ապրող իւր ընկերուհին և անոր բարձին քով կը կենայ: Տեսելէ իսկ անարկը երկակուսեցնէ կը լուսաւորայէր: Մի քանի վայր-եան լուսեանէ վերջ ուրուականը կամաց կամաց թեթեւ ամպի մը վերածուած կէս ժամու չափ մնաք սենեակին մէջ:

Այդ դէպքէն մի քանի օր յետոյ, Անգլիա եկաւ ինդոնա առարկայ եղող այդ ընկերուհին, որուն հետ մենք միասին կապրէինք էփօնօր—Քէսլէ ի արեւմա-եան կողմը:

Ժիւլիան երկրորդ անգամ ըլլալով, հոս ալ երե-ցաւ ընկերուհին որ դեռ չ'էր քնացած և գրգռուած վիճակի մը մէջ տեսաւ Ժիւլիան այնպէս որոշ, այն-պէս գեղեցիկ, ինչպէս իւր կենդանութեանը: Սա-կայն տեսիլքը առանց կարենալ խօսելու շուտով ան-հետացաւ: Ժիւլիայի ընկերուհին՝ այս երկրորդ երևոյթը պատմեց և հարցոյց ինծի թէ՛ չ'է կարե-ղի արդեօք նախագիտեմ նամակ ստանալ:

(Շարունակելի)

ՅԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԿԸՆԴՈՒՆՈՒԻՆ ԿԱՆԽԱՎՃԱՐՈՎ ՄԸ